**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՈՂ ԱՆՁ**

ք. Երևան 29.12.2020թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
# ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՈՂ ԱՆՁԻ
# թիվ ՍՑ-LO-2020/276

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Մասնակից՝ «Արտկոն» ՓԲԸ

Մասնակցությամբ՝
«Արտկոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Քոյլոյանի, Հ. Ղազարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում մոդուլային տիպի մսուր մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ոաումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 08.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18215-2020 գրությամբ «Արտկոն» ՓԲԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

## ՊԱՐԶԵՑ

### 1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 01.12.2020թ.-ի թիվ 02/16.4/9006-2020 գրության հիման վրա, 08.12.2020թ.-ին «Արտկոն» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 08.12.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 08.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/276 համարի ծածկագիրը:

17.12.2020թ.-ին և 29.12.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 17.12.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.12.2020թ.-ին:

### 2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 01.12.2020թ.-ի թիվ 02/16.4/9006-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

*«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2020 թվականի հոկտեմբերի 22-ին հայտարարված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում մոդուլային տիպի մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել նաև «Գևորգյան և Ներսիսյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը և «ԱՐՏԿՈՆ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություններ):*

*ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն Ընկերությունները ծանուցվել են մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին:*

*Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Ընկերությունների հայտերը մերժվել են:*

*Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում՝ կից ներկայացնում եմ Ընկերությունների տվյալները և հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթղթերի պատճենները:»:*

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Արտկոն» ՓԲԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

**3. <u>«Արտկոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.**

Բողոքներ քննող անձը 09.12.2020թ.-ի գրությամբ դիմել է «Արտկոն» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18215-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով 17.12.2020թ.-ի նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Մասնակիցը 16.12.2020թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

*«Անդրադառնալով գործի համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներին, հայտնեմ հետևյալը, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2020 թվականի հոկտեմբերի 22-ին հայտարարված «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում (այսուհետ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԱՐՏԿՈՆ» ՓԲ ընկերությունը:*

*Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 20.11.2020 թվականի N 2-3 արձանագրությամբ արձանագրվել են անհամապատասխանություններ և մեկ աշխատանքային օրով կասեցվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը, մասնակիցներին արձանագրված անհամապատասխանությունների մասին ծանուցելու և դրանց շտկման համար ժամկետ տրամադրելու համար:*

*Նույն օրը Ընթացակարգի հանձնաժողովի կողմից 20.11.2020 թվականի N 2-3 արձանագրությունը ուղարկվել է «ԱՐՏԿՈՆ» ՓԲ ընկերությանը:*

*«ԱՐՏԿՈՆ» ՓԲ ընկերության կողմից շտկվել է արձանագրված անհամապատասխանությունը և հայտում ներառվել է արտադրողի, մոդելի և մանրամասն տեխնիկական բնութագրի վերաբերյալ տեղեկատվությունը:*

*Ընթացակարգի հանձնաժողովի կողմից 20.11.2020 թվականի N 2-3 արձանագրությունը կազմվել է ոչ պատշաճ, մասնավորապես «ԱՐՏԿՈՆ» ՓԲ ընկերության վերաբերյալ առկա անհամապատասխանությունները մատնանշվել են երկու տարբեր էջերում շփոթմունքի մեջ գցելով ընկերությանը: Արդյունքում ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 42-րդ կետի համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է:*

*Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝*

*ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,*

*բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,*

*գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:*

*Կարգի 45-րդ կետի համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝*

*համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:*

*Սույն իրավական նորմերի վերլուծության արդյունքում պետք է փաստել հետևյալը, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե, ի թիվս այլնի՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Այսինքն մասնակցի կողմից ստանձնած պարտավորության խախտումը, այսինքն վարքագծի այնպիսի դրսևորումը, որը կհանգեցնի նրա հետագա մասնակցության դադարեցմանը, նոր միայն կարող է պատճառ հանդիսանալ մասնակցին գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:*

*ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝*

*1. Պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:*

*Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:*

*2. Մեղքի բացակայությունն ապացուցում է պարտավորությունը խախտած անձը:*

*3. (...):*

*Սույն իրավական նորմից հետևում է, որ եթե առկա է պարտապանի պարտավորության խախտում և դրանում բացակայում է նրա մեղքը, ապա նա ազատվում է պատասխանատվությունից: Վերոհիշյալ հիմնավորումների շրջանակում պետք է փաստել, որ Ընթացակարգի շրջանակում Պատվիրատուի և մասնակցի գործողությունների համապարփակ վերլուծության արդյունքում պետք է անդրադարձ կատարել մասնակցի վարքագծին և գործողություններին, որով պայմանավորված նոր միայն փաստել նրա մեղքի առկայության կամ բացակայության մասին:*

*Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.*

*1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.*

*2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.*

*3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:*

*Կարգի 41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:*

*Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:*

*Վերոգրյալի ուսումնասիրմամբ պետք է փաստել հետևյալը, որ Պատվիրատուի կողմից մասնակցի վարքագիծը և գործողությունները, մեղքի առկայությունը կամ բացակայությունը արձանագրելուց բացի պետք է ուղղված լինեն նաև մրցակցային, ոչ*

*խստրական մոտեցմամբ գործողությունների իրականացմանը: Նշված սկզբունքի սահմանումը ինքնանպատակ չէ և այն ուղղված է կարգավորելու մրցակցության թափանցիկությունը, ինչպես նաև Պատվիրատուի գործողությունների թափանցիկությունը: Այսինքն եթե Կարգով նախատեսված դեպքերում Պատվիրատուն մասնակցի հայտում արձանագրում է անհամապատասխանություններ, ապա կասեցնելով նիստը մեկ աշխատանքային օրով, այդ մասին ծանուցում է մասնակցին: Մասնակցին ծանուցելու Պատվիրատուի պարտականությունը հենց ուղղված է թափանցիկ գործողություններ և մրցակցություն ապահովելու, ինչպես նաև ոչ խստրական վերաբերմունք դրսևորելու համար, որպեսզի մասնակցի համար ակնհայտ լինի Պատվիրատուի կողմից իրեն հասցեագրված պահանջը և պատշաճ հնարավորություն ունենա դրսևորելու իրավաչափ վարքագիծ: Իսկ այն դեպքերում երբ Պատվիրատուի գործողությունները համարժեք չեն օրենսդրական պահանջներին հանգեցնում են ոչ հստակ գործողությունների և մասնակցին գցում են շփոթմունքի մեջ:*

*Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, Պատվիրատուն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստում 20.11.2020 թվականին արձանագրելով անհամապատասխանություններ մեկ աշխատանքային օրվա ընթացքում ոչ թե ծանուցեց «ԱՐՏԿՈՆ» ՓԲ ընկերությանը արձանագրված անհամապատասխանությունների մասին, այլ ուղարկեց 20.11.2020 թվականի N 2-3 արձանագրությունը: Նույն տրամաբանությամբ կարող էր էլ. փոստով հայտնել, որ կազմվել և հաստատվել է նույն արձանագրությունը, որը տեղադրված է gnumner.am կայքում և դա դիտարկեր, որպես ծանուցում: Օրենսդրի կողմից արձագրված անհամապատասխանության վերաբերյալ ծանուցման կարևորումը ինքնանպատակ չէ, այն նախատեսվել է նաև այն տրամաբանությամբ, որ ակնհայտ և պարզ լինի մասնակցի համար, իրեն ուղղված պահանջը, որի պարագայում նոր միայն հնարավոր կլինի գնման գործընթացում ապահովել թափանցիկ և ոչ խստրական գործառույթներ և մրցակցություն: Հենց այդ նպատակով էլ օրենսդիրը Կարգի 42-րդ կետի հիմքով հայտի մերժման հնարավորություն նախատեսել է միայն այն դեպքում, երբ ապահովվել է Կարգի 41-րդ կետի պահանջները, ուստի այն դեպքերում երբ Պատվիրատուի կողմից առկա չէ Կարգի 41-րդ կետին համապատասխան ուղարկված ծանուցում, ապա չի կարող կիառելի լինել Կարգի 42-րդ կետի դրույթները: Սույն դեպքում Պատվիրատուի կողմից պատշաճ ծանուցում չուղարկելը «ԱՐՏԿՈՆ» ՓԲ ընկերության մոտ ստեղծեց շփոթմունք և Ընկերության վարքագիծը ուղղված չէր*

*պարտավորության չկատարմանը, որը ակնհայտ է նաև այն հանգամանքից, որ արձանագրված անհամապատասխանություններից մեկը որը տեսանելի է եղել շտկվել է անմիջապես, ու եթե առկա լիներ ծանուցում որտեղ միաժամանակ նշված կլիներին բոլոր անհամապատասխանությունները, ապա «ԱՐՏԿՈՆ» ՓԲ ընկերությունը անվերապահորեն կշտկեր դրանք, քանզի այն պարզապես կրում էր տեխնիկական բնույթ և նույնիսկ այլ փաստաթղթի պահանջ առկա չէր, կրկին նշեմ, որ արձանագրված այն անհամապատասխանությունը, որը ակնհայտ էր Ընկերության կողմից շտկվել է սահմանված ժամկետում: Պայմանավորված վերոգրյալով պետք է փաստել, որ «ԱՐՏԿՈՆ» ՓԲ ընկերության վարքագիծը ուղղված չէր պարտավորությունների չկատարմանը, այլ Պատվիրատուի գործողությունները և օրենքով սահմանված կարգով ծանուցում չուղարկելն է հանգեցրել սույն իրավիճակին, որը բացառում է մասնակցի մեղքը:*

*Ուստի պայմանավորված վերոգրյալով գտնում եմ, որ ՀՀ ֆինանսների նախարարության նախաձեռնությունը «ԱՐՏԿՈՆ» ՓԲ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը ենթակա է մերժման:»:*

**4. <u>ՍՑ-LO-2020/276 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում մոդուլային տիպի մսուր մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 22.10.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Մրցույթին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Արտկոն» ՓԲԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով

սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 20.11.2020թ.-ի նիստի թիվ 2-3 արձանագրության 1.1-րդ կետի համաձայն՝ «Արտկոն» ՓԲԸ-ի կողմից Ընթացակարգի հրավերի Հավելված 1.1-ը լրացված չէ (բացակայում է արտադրողի, մոդելի և մանրամասն տեխնիկական բնութագրի վերաբերյալ տեղեկատվությունը): **Ծավալաթերթի մասով** «Արտկոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի և ծավալաթերթի միավոր արժեքները տարբերվում են միմյանցից չափման միավորներով, ինչպես նաև ծավալաթերթում աշխատանքների բաժինների համար ստացվող կշիռների մի մասը չի համապատասխանում սահմանված նվազագույն և առավելագույն կշիռների միջակայքին, մասնավորապես.

Ընդամենը՝ Օդափոխության մաս,

Ընդամենը՝ Կոյուղու հոր,

Ընդամենը՝ Խաղահրապարակի սարքավորումներ, կոնստրուկցիա:

Նույն արձանագրության 1.2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի պահանջները, որոշել է կասեցնել նիստը և ծանուցել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 23.11.2020թ.-ը ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

v. Հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի՝ info@artcon.am էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկել Հանձնաժողովի 2.3 արձանագրությունը և որպես ծանուցման բովանդակություն նշվել է հետևյալը՝ «Ծանուցում «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների հայտերում արձանագրված անհամապատասխանությունների մասին:

vi. Հանձնաժողովի 24.11.2020թ.-ի նիստի թիվ 2.4 արձանագրության 1.1-րդ կետի համաձայն՝ «Արտկոն» ՓԲԸ-ի կողմից շտկումից հետո ներկայացված ծավալաթերթը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Հավելված 1.1-ում՝ էլեկտրոնային թվային ստորագրությունն ակտիվ չէ: Ծավալաթերթով ներկայացված գնի և թիվ 2 հավելվածով (գնային առաջարկ) ներկայացված ընդհանուր գնի միջև առկա է անհամապատասխանություն, ինչպես նաև ծավալաթերթում ներքոնշյալ աշխատանքների բաժինների համար ստացվող կշիռների մի մասը չեն համապատասխանում սահմանված նվազագույն և առավելագույն կշիռների միջակայքերին.

Ընդամենը՝ օդափոխության մաս,

Ընդամենը՝ կոյուղու հոր,

Ընդամենը՝ խաղահրապարակի սարքավորումներ, կոնստրուկցիա:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջները, որոշել է «Արտկոն» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

**5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18215-2020 գրությամբ «Արտկոն» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած

ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Նույն ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից առաջարկվող՝ հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները: Ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրի նախագծում ներառվում են վերջինիս կողմից հայտով ներկայացված սարքերը և սարքավորումները:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված

տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում մոդուլային տիպի մսուր մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 22.10.2020թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող սարքերի և սարքավորումների նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ

փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում մոդուլային տիպի մսուր մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 22.10.2020թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 20.11.2020թ.-ի նիստի թիվ 2-3 արձանագրության 1.1-րդ կետի համաձայն՝ «Արտկոն» ՓԲԸ-ի կողմից Ընթացակարգի հրավերի Հավելված 1.1-ը լրացված չէ (բացակայում է արտադրողի, մոդելի և մանրամասն տեխնիկական բնութագրի վերաբերյալ տեղեկատվությունը): **Ծավալաթերթի մասով** «Արտկոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի և ծավալաթերթի միավոր արժեքները տարբերվում են միմյանցից չափման միավորներով,

ինչպես նաև ծավալաթերթում աշխատանքների բաժինների համար ստացվող կշիռների մի մասը չի համապատասխանում սահմանված նվազագույն և առավելագույն կշիռների միջակայքին, ինչով պայմանավորված՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի պահանջները, որոշել է կասեցնել նիստը և ծանուցել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 23.11.2020թ.-ը ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի՝ info@artcon.am էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկել Հանձնաժողովի 2.3 արձանագրությունը և որպես ծանուցման բովանդակություն նշվել է հետևյալը՝ «Ծանուցում «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների հայտերում արձանագրված անհամապատասխանությունների մասին»: Հանձնաժողովի 24.11.2020թ.-ի նիստի թիվ 2.4 արձանագրության 1.1-րդ կետի համաձայն՝ «Արտկոն» ՓԲԸ-ի կողմից շտկումից հետո ներկայացված ծավալաթերթը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Հավելված 1.1-ում՝ էլեկտրոնային թվային ստորագրությունն ակտիվ չէ: Ծավալաթերթով ներկայացված գնի և թիվ 2 հավելվածով (գնային առաջարկ) ներկայացված ընդհանուր գնի միջև առկա է անհամապատասխանություն, ինչպես նաև ծավալաթերթում ներքոնշյալ աշխատանքների բաժինների համար ստացվող կշիռների մի մասը չեն համապատասխանում սահմանված նվազագույն և առավելագույն կշիռների միջակայքերին, ինչով պայմանավորված՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջները, որոշել է «Արտկոն» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն

դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Անդրադառնալով Մասնակցի դիրքորոշմամբ նշված այն հանգամանքին, որ Հանձնաժողովը 20.11.2020թ.-ին արձանագրությամբ արձանագրելով անհամապատասխանություններ Մասնակցի հայտում՝ ոչ թե ծանուցել է «Արտկոն» ՓԲԸ-ին արձանագրված անհամապատասխանությունների մասին, այլ ուղարկել է 20.11.2020թ.-ի թիվ 2-3 արձանագրությունը, ինչն ակնհայտ և պարզ չի եղել Մասնակցի համար հասկանալու իրեն ուղղված պահանջը, ինչի արդյունքում «Արտկոն» ՓԲԸ-ի մոտ ստեղծվել է շփոթմունք, քանի որ արձանագրված անհամապատասխանություններից մեկը, որը տեսանելի է եղել շտկվել է անմիջապես, ու եթե առկա լիներ ծանուցում որտեղ միաժամանակ նշված կլինեին բոլոր անհամապատասխանությունները, ապա Մասնակիցն անվերապահորեն կշտկեր դրանք, Բողոքներ քննող անձը գտնում է անհիմն, հետևյալ պատճառաբանությամբ.

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ»*

*ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում: Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթներն իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում են հանձնաժողովի քարտուղարի գործողությունները, որոնք պետք է իրականացվեն մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների դեպքում, այն է՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրն անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչպես նաև մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Միաժամանակ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ծանուցման էությունը կայանում է և ուղղված է Մասնակցին որոշակի հանգամանքների վերաբերյալ իրազեկելուն, տեղեկատվություն տրամադրելուն և բովանդակության ամբողջությանը հասու դարձնելուն:

Բողոքներ քննող անձը, ամփոփելով վերոգրյալ դիրքորոշումը, եզրահանգում է նաև, որ թեև գործադիրը հստակ չի սահմանում, թե ծանուցումն ինչպիսի՞ բովանդակություն

պետք է պարունակի, սակայն միանշանակ է այն, որ ծանուցումը պետք է լինի այնպիսին, որ հնարավորություն ընձեռի իրապես պարզելու դրանում պարունակվող հանգամանքը (ները), և մասնակցի կողմից ծանուցման հետ ծանոթանալու իրական հնարավորություն ստեղծվի: Այսինքն՝ մասնակիցների համար ծանուցումն իրական հնարավորություն պետք է ապահովի տիրապետելու դրա բովանդակությանը: Ընդ որում, հարկ է նկատել, որ շտկման մասին ծանուցումը պետք է պարունակի նաև տվյալներ շտկման ենթակա փաստաթղթերի ներկայացման ձևի և կարգի վերաբերյալ (կոնտակտային տվյալներ, էլեկտրոնային փոստի հասցե, որին պետք է մասնակիցն ուղարկի շտկված փաստաթղթերը և այլն): Ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկություններ, որոնք հնարավորություն կընձեռեն ծանուցումը (արձանագրությունը) ստացած մասնակցին, ծանուցմամբ նշված բովանդակությանը ծանոթանալուց հետո, շտկել անհամապատասխանությունները և ներկայացնել այն ձևով, ինչպես նշված է ծանուցմամբ կամ դրան կից ներկայացված արձանագրությամբ:

Վերոնշյալ պարտադիր վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր միայն փաստել՝ ծանուցման նպատակի լիարժեք իրականացման հանգամանքի մասին:

Տվյալ դեպքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի՝ info@artcon.am էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկվել Հանձնաժողովի 2.3 արձանագրությունը՝ որպես ծանուցում, ինչը չի հակասում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, քանի որ օրենսդրի կամ գործադրի կողմից չի սահմանվել ծանուցման որևէ ձև, հետևաբար՝ Հանձնաժողովն ազատ է ընտրելու այն ծանուցման տարբերակը, որը նախընտրելի է վերջինիս համար:

Բացի այդ, Հանձնաժողովը, թիվ 2.3 արձանագրությամբ երկու տարբեր հատվածներում Մասնակցի հայտում արձանագրելով անհամապատասխանություններ, նշում է կատարել այդ մասին, մասնավորապես՝ անհամապատասխանություններ **հավելված թիվ 1.1-ի մասով** և անհամապատասխանություններ՝ **ծավալաթերթի մասով,** ուստի այս պարագայում՝ Մասնակցի այն պնդումը, որ վերջինս կարդացել է արձանագրության մի հատվածում առկա անհամապատասխանությունների մի մասը և շտկել է դրանք, իսկ մյուս մասը չի կարդացել և հետևաբար չի կատարել շտկում՝ չի համապատասխանում իրականությանը, քանի որ «Արտկոն» ՓԲԸ-ն Հանձնաժողովի կողմից արձանագրված նույնիսկ տեսանելի անհամապատասխանությունը (ըստ՝ Մասնակցի ներկայացրած

դիրքորոշման) չի շտկել, ինչպես թիվ 2.4 արձանագրությամբ Հանձնաժողովն է արձանագրել, որ Մասնակցի կողմից շտկումից հետո ներկայացված թիվ 1.1 հավելվածում էլեկտրոնային թվային ստորագրությունն ակտիվ չի եղել, իսկ **ներկայացված ծավալաթերթը** (Մասնակցի կողմից ներկայացված դիրքորոշման համաձայն՝ արձանագրության անտեսանելի հատվածը) **հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ**, որպիսի պայմաններում Մասնակցի կողմից խախտվել է Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջները:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Արտկոն» ՓԲԸ-ն թիվ 1 հավելվածով՝ հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արտկոն» ՓԲԸ-ն, Պատվիրատուի կողմից Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերով սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխանությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության

դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18215-2020 գրությամբ «Արտկոն» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/276 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Արտկոն» ՓԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**